

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԵՐՊԵՐՅԱՆԱԿԱՆ ԸՄԲԻՆՄԱՆ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԶԱՔԱՐԻԱ ԲՏԵ. ՍԱՐԻՔԵԿՅԱՆ

Իբրև «Մնացորդացի» սերնդի ներկայացուցիչ՝ դարիս առաջին կեսի փյունաբաճայ բազմաշնորհ ու տաղանդավոր մտածող՝ փիլիսոփա, հոգեբան, գեղագետ, երաժիշտ, մանկավարժ ու հրապարակախոս, Շահան Պերպերյանին շատերի նման նույնպես վիճակված չէր լիովին դրսևորելու իր բնատուր կարողությունները, արարելու մտավոր ու հոգևոր ներուժին համարժեք կոթողային գործեր, որովհետև առաջին և երկրորդ աշխարհամարտերին հաջորդած դաժան տարիներին, ապրելով սփյուռքահայ տարբեր գաղթօջախների հեղձուցիչ պայմաններում, ստիպված էր ընտանիքի հանապազօրյա հացը վաստակելու համար մանրադրամի վերածել իր հոգու շռայլ գանձերը: Այդ է պատճառը, որ այսօր մենք նրանից ունենք միայն Դպրեվանքի ընծայարանում տարբեր տարիների նրա կարդացած դասախոսությունների աշակերտական գրառումների հրապարակումներ¹, օրվա լրագրերին նյութ մատակարարելու նպատակով գրված, բայց ասելիքը լրիվ շրջահայտած հոդվածներ, հայագիտական տարաբնույթ գրքերի առաջաբաններ ու գրախոսություններ, հայ մշակույթի պատմության այլևայլ հարցերի մասին արված հպանցիկ դիտողություններ, արտահայտված տեսակետներ ու ցանկություններ, մշակութային այս կամ այն գործչի հորելյանի կամ մահվան առիթով կարդացած զեկուցումներ ու դամբանականներ, իր սաներին ասված ամավերջյան հրածեղտի խոսքեր, լրատվական նոթագրություններ² և այլն: Ցավոք, դրանց ճնշող մասը թերի ու անավարտ է, ուստի կարիք ունի ծավալման, լրացման և, անշուշտ, մասնագիտական բարեխիղճ խմբագրման:

Շահան Պերպերյանի բազմաբնույթ գրավոր ժառանգության մեջ երջանիկ բացառություն կարելի է համարել «Ծրկու ժամանակներ» համեմատա-

¹ Տե՛ս Ծանփան Բ. Պերպերյան (1891—1956), Արժեքաբանութիւն կամ արժեքներու իմաստասիրութիւն, Անթիլիաս, 1976, 159 էջ, Եւլյնի՝ Պատմութիւն իմաստասիրութեան, Անթիլիաս, 1977, 294 էջ, Եւլյնի՝ Բնագանցութիւն, Անթիլիաս, 1978, 184 էջ, Եւլյնի՝ Հոգեբանութիւն, Անթիլիաս, 1992, 381 էջ, Ի դեպ՝ եթէ այս ամենը հրատարակութեան է պատրաստել Պերպերյանի հրատարակատան սան Արտավազդ եպս. Քրթոյանը, ապա «Հոգեբանութիւն» ունեցել է մեկ այլ հրատարակություն ևս՝ տե՛ս Ծանփան Բ. Պերպերյան, Հոգեբանութիւն, ուսումնական լիակատար դասընթացք երեք հատորով, նոթագրեց և համադրական աշխատանքով դասավորեց, հրատարակեց Սիմոն Հովիվան, հ. Ա., Պէլյութ, 1980, 169 էջ, հ. Բ., Պէլյութ, 1981, 254 էջ: Ցավոք, հնարավորություն չենք ունեցել ծանոթանալու երրորդ հատորին, ուստի դժվարանում ենք ասել արդո՞ք այն հրատարակվել է թե ոչ: Հարկ է ավելացնել նաև, որ իբրև նույն հեղինակի կարդացած դասախոսություն, այս երկու հրատարակություններն ունեն էական տարբերություններ թե՛ ձևի և թե՛ բովանդակության տեսակետից:

² Տե՛ս Ծանփան Բ. Պերպերյան, Գեղագիտութիւն և դեղատրուեստ: Հավաքեց և խմբագրեց՝ Արտաշես Տէր-Խաչատրեան, Պէլյութ, 1975, 414 էջ, Եւլյնի՝ Իմաստասիրական ժողովածու: Կազմեց՝ Շահան վրդ. Մարգրիսեան, Անթիլիաս, 1992, 349 էջ:

բար ծավալուն աշխատությունը, որը հեղինակի կենդանության ժամանակ ունեցել է երկու տպագրություն: Առաջին անգամ այն հողվածաշարքի ձևով լույս է տեսել «Սիոն» ամսագրում (տե՛ս 1942—43 թթ.), իսկ երկրորդ անգամ առանձին գրքուկով հրատարակվել է Երուսաղեմում (1943): Այդ ժամանակ դեռ գտնվելով Երուսաղեմում՝ հեղինակն անձամբ վերամշակել է այն, կատարել լեզվական ու իմաստային որոշ փոփոխություններ, կցել երեք ծավալուն ծանոթագրություն, ավելացրել «Պէրպէրեան վարժարանի նախկին սաներու, նուէր՝ սրտագին յիշատակով Շ. Ռ. Պ., Երուսաղեմ, Ամանոր, 1943» ընծայագիրը:

Խնդրո առարկա երկը հեղինակի մահվանից հետո ունեցել է նաև երրորդ հրատարակությունը, որը վերցված է 1943 թ. երուսաղեմյան տպագրությունից³:

Ասեմք նաև, որ Պերպերյանի այս աշխատությունը, շնայած վերը նշված հրատարակություններին, մինչև օրս, ինչպես հարկն է, չի ուսումնասիրվել ու գնահատվել հայրենական փիլիսոփայապատմական գրականության մեջ, չի արժեվորվել նրա տեղն ու դերը հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ: Այդ տեսակետից միակ փորձը, որքան ինձ հայտնի է, կատարել է պրոֆ. Ն. Գ. Գաբրիելյանը, որը, սակայն, դրսևորելով ընդգծված դասակարգային մոտեցում, ըստ էության, ճիշտ չի հասկացել ժամանակի պերպերյանական ըմբռնման իմաստն ու կարևորությունը, այն որակել է որպես «մեռնող բուրժուազիայի» հոռետեսական տրամադրությունների արտահայտություն: Մինչդեռ իրականում, ինչպես դեռ կտեսնենք, ժամանակի իր նորովի ըմբռնմամբ Շահան Պերպերյանը հետապնդել է տրամագծորեն հակադիր նպատակ:

Իբրև Անրի Բերգսոնի աշակերտ ու հետևորդ՝ Շ. Պերպերյանն ըստ էության զարգացնում է ժամանակի բերգսոնյան ըմբռնումը, սակայն կուրորեն չի հետևում նրան, այլ որոշ իմաստով տեղայնացնում ու ազգայնացնում է ժամանակի մասին նրա պատկերացումը, փորձում է կատարել մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող գործնական հետևություններ, որոնք այսօր նույնպես չեն կորցրել իրենց իմացական-ճանաչողական սրժեքն ու կարևորությունը:

Պերպերյանը հստակ տարբերակում է երկու տեսակի ժամանակ՝ այսպես կոչված սրտաքին կամ ժամացուցային և ներքին կամ երաժշտական: Ժամանակի նման տարբերակումն, ըստ նրա, ունի ոչ այնքան տեսական, որքան գործնական նշանակություն, որովհետև նայած թե դրանցից որ մեկի տեսանկյունից ենք ընկալում ու մեկնաբանում մեր գոյությունը, կյանքի իմաստն ու նպատակը, ըստ այդմ ունենում ենք կյանքի հանդեպ տարբեր, եթե շասենք հակադիր, տրամադրություն ու վերաբերմունք: Ահա թե ինչու ներկայացնելով ժամանակի մասին մերօրյա պատկերացումը, հեղինակի կարծիքով, իր աշխատության «էջերը պիտի յանգէին տեսակ մը գործնական թելադրանքի» (էջ 18):

Հանգամանորեն քննարկելով ժամացուցային և երաժշտական ժամանակները՝ հայ իմաստասերը ժամացուցային ժամանակը համեմատում է տարածության հետ՝ փորձելով բացահայտել դրանց միջև եղած նմանությունն ու տարբերությունը: Որպես հիմնական նմանություն նշում է դրանց դատարկությունը, անսկիզբ ու անվերջ լինելը: Ինչ վերաբերում է տարբերությանը, ապա տարածությունը եռաչափ է, որով այն, փաստորեն, ինքն է մեզ պար-

³ Տե՛ս Շահան Ռ. Պէրպէրեան (1891—1956) իմաստասիրական ժողովածու Կազմեց՝ Շահան վրդ. Թարգման, Անթիլիաս, 1992, էջ 18—49: Այսուհետև այս աշխատությունից մեջբերումներ կատարելիս տեքստում՝ փակագծերի մեջ, նշելու ենք միայն հրատարակության էջը 20

տադրում իր գոյութիւնը, մինչդեռ ժամանակը ունի միայն մեկ չափում, այսինքն՝ հիշեցնում է ուղիղ գիծ, ուստի նրա գոյութիւնը մասամբ դառնում է կասկածելի: Պատճառն այն է, ասում է իմաստասերը, որ ժամացուցային ժամանակի երեք փուլերից՝ ներկա, անցյալ և ապագա, երկուսը՝ անցյալը և ապագան, ըստ էութեան, չունեն իրական գոյութիւն, քանզի անցյալը մատնանշում է այլևս գոյութիւն չունեցողի, իսկ ապագան՝ հնարավորի կամ դեռևս գոյութիւն չունեցողի մասին: Ընդ որում, վերջինս գոյութիւն ստանալուն պես դադարում է ապագա լինելուց, այսինքն՝ դառնում է ներկա: Դրանով իսկ ժամանակի գծի վրա երկու ուղիղների «մեջտեղ սեղմուած» ներկան հագիվ թէ գոյութեան կէտ մը միայն կը ներկայացնէ» (էջ 21):

Փաստորեն ստացվում է, որ ժամանակի գիծը չունի ինքնուրույն գոյութիւն, այլ նրա պատկերը մեր միտքը «փոխ առած» է տարածութիւնից, ըստ այդմ, այլևս գոյութիւն չունեցող անցյալը պատկերացնում է որպէս կեսգոյութիւն շարունակող, իսկ ապագան՝ իբրև կեսգոյութիւն ունեցող: Դրանով իսկ ստեղծվում է տպավորութիւն, որ ժամանակն իր երեք մասերով հավասարապէս իրական գոյութիւն ունի, մինչդեռ իրականում անցյալն այլևս չկա, իսկ ապագան գոյութիւն ունի լոկ որպէս հնարավորութիւն:

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում «ներկա» կոչվածը: Ոչ այլ ինչ, եթե ոչ երկու ուղիղների միջև սեղմված գոյութեան ինչ-որ կետ, որը, ըստ էութեան, երկու շարունակութիւններն իրարից զատող կետ է կամ սահման: Ուստի, երբ նայում ենք ժամացուցային ժամանակին, մի կողմից տեսնում ենք միայն այն տարածութիւնը, որ արդեն անցել է ժամացույցի սլաքը, իսկ մյուս կողմից՝ այն տարածութիւնը, որ դեռ պետք է անցնի այդ նույն սլաքը:

Տարածութեան այդ երկու հատվածն այն խաբկանքը կամ պատրանքն են ստեղծում, որ իբր ժամանակն ունի իրական գոյութիւն, բայց դա միայն թվում է, որովհետև պատրանքն անմիջապէս փարատվում է, երբ սկսում ենք մտածել, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ թէ ժամանակի, այլ նրա տարածական պատկերի հետ: Մինչդեռ ժամանակը տարածութիւնն չէ, հետեւաբար կայուն ու մնայուն չէ:

Այսպիսով, որքան էլ ժամացուցային ժամանակն ի հայտ է բերում երկու ուղիղների միջև սեղմված իրական գոյութեան ինչ-որ վիճակ, որի գոյութիւնը, լինելով առեղծված, այնուամենայնիվ մարդկային միտքը կարողացել է ըմբռնել այն, իսկ որ ավելի զարմանալի է, դա անելու համար ստեղծել է ժամացույց կոչված առեղծվածային մեքենան, որ անկախ իր ձևից՝ զբոսայանի է, ձեռքի, թէ պատի կամ սեղանի, ունի հասարակական մեծ օգտակարութիւն, առանց որի կխաթարվի հասարակական կյանքը:

Ուրեմն, օգտակարութեան իմաստով ժամացուցային ժամանակը ոչ մի կասկած չի հարուցում: Բայց պատկերը միանգամայն փոխվում է, երբ մարդը փորձում է նրանով չափել ու իմաստավորել իր ապրած կյանքը: Այս դեպքում արդեն, ըստ էութեան, ոչինչ է դառնում մեր անցյալը, այսինքն՝ մեր ամբողջ ապրած կյանքը, որը այլևս չկա, և ողջ ապրելիք կյանքը, որը դեռևս չկա:

Հարկ կա՞ ասելու, որ այդպէս մտածելով՝ կարող ենք համակվել անհաղթահարելի հոռետեսութեան ու հուսահատութեան զգացումով, առավել ևս՝ եթե վատատես խառնվածք ունենք: Այդ է պատճառը, որ բոլոր այն մարդիկ, ովքեր կյանքը չափում են ժամացուցային ժամանակով, անմնացորդ տրվում են ներկային, ջանում են վայելել անցողիկ ներկան՝ որքան հնարավոր է:

Բարեբախտաբար ժամացուցային ժամանակից բացի կա նաև ներքին կամ երաժշտական ժամանակը, որին տարբեր մտածողներ, ասում է Շ. Պերպերյանը, տարբեր անուն են տալիս: Օրինակ, «մեր օրերու հանճարեղ հայտնատեսողը» Բերգսոնը, այն կոչում է «թանձրական կամ լեցուն տևողութիւն»,

տւրիշները՝ «ապրած ժամանակ», բայց կարևորը անունը չէ, այլ այն, թե ով ինչ է հասկանում դրա տակ, այսինքն՝ թե իրականում ինչ է իրենից ներկայացնում այս մյուս ժամանակը: Իհարկե, վերջին հաշվով, սա նույնպես ժամանակ է, բայց էպես տարբերվում է առաջինից: Ամենահիմնական տարբերությունն այն է, որ եթե նախորդը բոլոր մարդկանց համար նույնն է, այսինքն՝ ունի հասարակական բնույթ, ապա երկրորդը ենթակայական ու անձնական է, ունի մեր անձին մտերմիկ գոյություն, անորոշ, անչափելի ու անտեսանելի է: Այսուհանդերձ, եթե փորձենք ինչ-որ ձևով սահմանել ու որոշակիացնել այն, ապա կարող է մեզ ներկայանալ հետևյալ հատկանիշներով: Նախ՝ ի տարբերություն առաջինի, երկրորդը բնավ էլ դատարկ չէ, այլ լրջված է մեր ներապրումներով կամ, որ միևնույնն է, մեր հոգեկան ներապրումներով, որոնք վերացնելու դեպքում այն նույնպես կարող է դառնալ դատարկ ու բովանդակազուրկ, դադարել գոյություն ունենալուց: Այլ խոսքով ասած՝ երաժշտական ժամանակի բովանդակությունը կազմում են մեր անձի կյանքը բաղադրող եղելությունները, անկախ այն բանից, թե որտեղ են տեղի ունենում դրանք՝ մեր անձից դուրս, թե նրա ներսում:

Երկրորդ, եթե ժամացուցային ժամանակը միօրինակ ու համասեռ է, ապա երաժշտականը տարասեռ ու այլազան է, ուստի ընթանում է տարբեր ձևով, այսինքն՝ կախված է մեր ապրումներից՝ կարող է արագանալ կամ դանդաղել: Այդ է պատճառը, որ ժամացուցային միևնույն ժամանակահատվածը տարբեր մարդկանց համար ունենում է տարբեր տևողություն՝ մեկի համար այն կարող է տևել ժամեր, իսկ մյուսի համար՝ րոպեներ ու վայրկյաններ: Երրորդ, առաջինի նման սա նույնպես անշրջելի ու անդառնալի է, բայց, ի տարբերություն նրա, վերջինիս հատվածներն իրարից կտրված ու մեկուսացած չեն, այլ մեկը մյուսի հանդեպ ունեն ինչ-որ մտերմիկ շունչ ու զգացողություն, ուստի սրա անցած-գնացած պահերը, թեկուզև դժգույն ու աղոտ ձևով, դառնալի են որպես անցյալի հուշեր ու հիշատակներ:

Չորրորդ, ժամացուցային ժամանակը իր զուգընկեր տարածության նրման շունչի անսահմանության հավակնություն, այլ գիտի, որ ինքն սկիզբ և վերջ ունի, բայց դրա հետ մեկտեղ ունի նաև մի ներքին թաքնված հպարտություն, որն իրենից ներկայացնում է հավերժի, թեկուզև հեռավոր, անկատար ու համեստ պատկերը: Բանն այն է, շարունակում է հայ իմաստասերը, որ եթե ժամացուցային ժամանակի ներկան որոշ իմաստով երկու կողմից սահմանափակված էր ոչնչով և ըստ այդմ՝ ներկան իր վրա կրում էր անմիջապես անցյալ դառնալու, ուստի և ոչնչի վերածվելու կնիք, ապա այդպիսին չէ երաժշտական ժամանակի ներկան: Եթե փորձենք վերջինս նույնպես ներկայացնել տարածական ձևով, ապա, ի տարբերություն նախորդի, կունենանք ոչ թե դեպի անցյալը գնացող գծի վրա ինչ-որ կետ, այլ այդ կետի վրա բարձրացող ուղղահայաց, որի շնորհիվ վերջինիս ներկան ձեռք է բերում երկու չափում՝ դեպի անցյալը գնացող երկարություն, որին առնչվում է գործունե գուռ «ներկայութեան բարձրութեան գիծը» (էջ 25): Այսինքն՝ ինչպես մեր մարմինն է կանգնած երկրի վրա, այնպես էլ մեր անձն է կանգուն, որը ժամանակի գծի վրա ազդող, ներգործող ու ակտերի ստեղծող է, ուստի և ինքն իրենով ամեն պահի գոյացնում է այդ գիծը: Ավելին, այս ներկան նման է ոչ թե ուղիղ գծի վրա իջեցված ուղղահայացի, այլ եռանկյան, որի հիմքը, նայած մեր ունեցած հոգեկան ապրումների տևողությանը և ընդգրկման տարողությունը, կարող է լինել մեծ կամ փոքր: Հետևաբար, այն, ինչ այս ժամանակի համար կոչում ենք մեկ պահ, մյուսի համար կարող է լինել ներկա ակնթարթների մի ամբողջ շարք: Դա լավագույնս կարող ենք ցուցադրել երաժշտական մեղեդիի ունկնդրման օրինակով: Եթե ժամացուցային ժամա-

նակը մեղեդիի ձայները վերցնում է միայն իրենց ընթացքի մեջ, ապա երա-
ժըշտական ժամանակը դրանք, ասես, կանգնեցնում ու պահում է, շնորհիվ
որի կարողանում ենք նոր ձայնը համադրել նախորդների հետ և ունենալ մե-
ղեդու ընկալումը: Եթե այդպես չլիներ, ապա կունենայինք միայն իրար նա-
խորդող ու հաջորդող ձայների շարք, բայց ոչ երբեք մեկ միասնական մեղե-
դի: Ելնելով ասվածից՝ Շ. Ռ. Պերպերյանը եզրակացնում է, որ երաժշտական
ժամանակը ոչ այլ ինչ է, եթե ոչ «միեւնոյն ատեն այլազանութեան մը «լայն-
քին»՝ ու փոխուող, աճող, լինող, թավալող այլազանութեան մը «երկայնքին»
միտքի միութեանը մեջ ընդգրկումն» (էջ 32):

Այսպիսով, եթե փորձենք համեմատել այդ երկու ժամանակներն իրար
հետ, կհամոզվենք, որ դրանք «հասարակաց միեւնոյն շափի մը անընդունակ
են. մէկուն ու միուսին ներկաներուն մէջ ոչ միայն, այսպէս ըսենք, տեւողու-
թեան քանակութեան մը այլ մանավանդ որակի տարբերութեան մը գոյու-
թեան պատճառով. մէկուն ներկան՝ ըլլալով անհունօրէն փոքր ակնթարթ,
մյուսին ներկան՝ հոծ, սերտ, թէեւ չափուող տեւողութիւն. մէկուն ներկան
անորակ, պարապ, շարժուն ու անշարժ կէտերու հանդիպում ըլլալով, մինչ
մյուսինը՝ հոգեղէն երանգներով ճոխ՝ որակավոր լինող լիութիւն» (էջ 33):

Այսուհանդերձ երաժշտական ժամանակը ևս հավիտենական չէ, այլ
նույնպես ունի իր անցյալը, որը, սակայն, առաջինի նման չի շնջվում ու ու-
ղընչանում, այլ «ինչպէս որ մեր մարմինը կ'աճի որովհետեւ իր մէջէն անց-
նող, արտաքին աշխարհէն առնուած նյութերէն՝ հետզհետէ ավելի մեծ բա-
ժիններ կը յաջողի իրեն վրա դնել՝ պահել, իր կենսաբանական ձեւը իրա-
գործելու և պահելու համար, այնպէս ալ մեր անձը կ'աճի հետզհետէ որով-
հետեւ իր կեանքի եղելութիւններէն, իր յաջորդական ներկաներէն իր մար-
սած, իմա՝ ոգեղինացուցած բաժինները կը պահէ իրեն, անոնցմով իր «Հո-
գեղէն մարմինը» մնայուն իր Զեւին մէջ հետզհետէ ակելի հարուստ կազմա-
ւորելու համար» (էջ 34): Ծիշտ է, ասում է հայ իմաստասերը, երաժշտական
ժամանակի ներկան, դառնալով անցյալ, լրիվ չի անհետանում ու ուղընչանում,
այլ այն միշտ կա մեր մեջ և այս կամ այն ձևով ու շափով ազդում է ներկայի
վրա, բայց, ի տարբերություն ներկայի, ունի աններկա ներկայություն, ու
եթե այդպես չլիներ, այսինքն՝ ունենար ներկա ներկայություն, կարող էր
խանգարել մեզ, շեղել մեր ուշադրությունը ներկայից, որը խիստ անհրաժեշտ
է մեր ամենօրյա գործունեության համար: Հետևաբար, մոռացումը, լինելով
բնական ու անհրաժեշտ երևույթ, միաժամանակ օժտված է մի կարևոր ա-
ռանձնահատկությամբ՝ հենց որ ներկայի մեջ կարիք ենք զգում անցյալի ծա-
ռայության. այսինքն՝ որ անցյալը ուղղորդի ներկան, անմիջապես կարողա-
նում ենք հիշողությամբ վերականգանացնել այն:

Երաժշտական ժամանակի անցյալի ու ներկայի միջև եղած մյուս էական
տարբերությունն այն է, որ եթե ներկան ունի առարկայական-ֆիզիկական
կամ արտաքին կեցություն, ապա անցյալն ունի միայն ներքին, հոգեկան կե-
ցություն: Բայց սրանից բնավ չպետք է հետևեցնել, թե անցյալը մեռած ու
անկենդան բեռ է ներկայի համար և ոչ մի ազդեցություն չի ունենում ներ-
կայի վրա: Ընդհակառակը, մեր անցյալը տարբեր ձևերով առկա է մեր ներ-
կայի մեջ և որոշակի իմաստով պայմանավորում է նրա բովանդակությունն
ու ձևը: Այդ է պատճառը, որ նույն երևույթը իրար ժամանակակից ու հասա-
կակից տարբեր մարդիկ զգում, հասկանում ու մեկնաբանում են տարբեր
ձևով: Այլ խոսքով ասած՝ յուրաքանչյուր անհատ աշխարհին ու երևույթնե-
րին նայում է անցյալի իր փորձից ու փորձառությունից ելնելով, ուստի նույն
ներկան երբեք նույնը չի կարող լինել տարբեր անձանց համար, որովհետև
տարբեր են նրանց անցյալները: Այդ է պատճառը, որ ժողովուրդների պատ-

մության նման անհատների կենսագրության մեջ նույնպես երևույթներն ու իրադարձությունները երբեք չեն կրկնվում:

Որ անցյալը ներկայի մեջ ունի ոչ թե մեռած, այլ կենդանի գոյություն, երևում է նաև այն բանից, որ անցյալը մեզ համար մշտապես շի մնում նույնը, այլ ներկայի փոփոխության հետ մեկտեղ փոփոխվում է նաև անցյալը: Փաստորեն, ինչպես անցյալն է ազդում ներկայի վրա, այնպես էլ ներկան է ազդում անցյալի վրա, այսինքն՝ անցյալն ու ներկան գտնվում են փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ: Հետևաբար, երաժշտական ժամանակի անցյալը լոկ անցյալ չէ, այլ ակնհայտորեն կախված է ներկայից, մեր այն բարոյահոգեբանական կեցվածքից ու հայացքից, որով մենք նայում ենք անցյալին: Ըստ այդմ՝ կարող ենք վստահաբար եզրակացնել, որ յուրաքանչյուր անձնավորություն, ինչպիսին որ կա, հենց այդպիսին է ոչ միայն իր ներկայով, այլև անցյալով:

Իսկ ինչպիսի՞ն են ժամացուցային և երաժշտական ժամանակների ապագաները, արդյոք նո՞ւյնն են, թե դրանք նույնպես տարբերվում են իրարից: Ինքնին հասկանալի է, որ եթե տարբեր էին նրանց ներկաներն ու անցյալները, ապա նույնը չեն կարող լինել նաև ապագաները: Վերջիններիս միջև եղած ամենահիմնական տարբերությունը Շ. Պերպերյանը տեսնում է այն բանում, որ եթե ժամացուցային ժամանակի ապագան շկա ներկայի մեջ և, ըստ էության, դրսեկ է, որի վրա մենք ոչ մի ազդեցություն ունենալ չենք կարող, ուստի նրա հանդեպ դրսևորում ենք կրավորական-սպասողական կեցվածք, ապա երաժշտական ժամանակի ապագան առկա է ներկայի մեջ, որովհետև է ներկայի կողմից, կամ, ինչպես հաճախ է ասվում, ներկան է կերտում ապագան: Ինչպես երաժշտական կամ գրական-գեղարվեստական ստեղծագործության մեջ յուրաքանչյուր հաջորդ քայլը բխում է նախորդից, պայմանավորված է նրանով, ճիշտ այդպես էլ երաժշտական ժամանակի ներկայից է բխում ապագան: Այստեղից հետևում է, որ մարդ արարածը միշտ ի զորու է վերափոխելու իր ներկան այնպես, որ ապագան լինի ոչ թե անհրաժեշտորեն ստացված, այլ ցանկալիորեն ստեղծված: Հենց դրանում է մարդկային կեցության ամենահիմնական գաղտնիքներից մեկը, եթե չասենք ամենահիմնականը. դա այն է, որ մարդ էակը մինչև վերջին շունչը փայփայում է ինչ-որ հույս ապագայի հանդեպ և դրանով իսկ՝ համակվում մաքառելու, պայքարելու, կերտելու ձգտումով:

Արդ՝ եթե, ինչպես նեսանք, այսքան տարբեր են ժամացուցային և երաժշտական ժամանակներն իրարից, ապա իրավամբ հարց է ծագում. մարդու գոյության համար դրանցից ո՞րն է ավելի կարևոր, այսինքն՝ որո՞վ պետք է ապրի մարդը, իմաստավորի իր կյանքը: Առաջադրելով այս հարցը՝ հայ իմաստասերը եզրակացնում է, որ մարդ արարածը, իբրև հասարակության անդամ ու հասարակական էակ, անշուշտ, շի կարող անտեսել ժամացուցային ժամանակը, որովհետև իր առտնին գործերը կարողավորելու համար կամա թե ակամա նա ստիպված է հաշվի առնելու այն, բայց ապրել դրանով, իմաստավորել իր կյանքը, նույնպես շի կարող, քանզի այդ դեպքում նրա կյանքը կդառնա տաղնապալից ու հոռետեսական, իսկ ապրելաձևը՝ ժխտական-սպասողական: Ընդհակառակը, որքան կարողանանք մտածել, ներզգալ ու ապրել մարդուն ներհատուկ երաժշտական ժամանակով, այնքան «ազատած պիտի ըլլանք մենք զմեզ վայրկեաններու փոշիին մէջ մեր անհետացումէն, անցեալին վիհին մէջ մեր անէացումէն. ազատուած պիտի զգանք մենք զմեզ մեր «անցաւորութեան» ցաւէն, ապագային կապուած անստուգութեան անձկութեանէն, ու թերևս մինչև մեր մահուան իսկ գերագույն մղձաւանջէն» (էջ 46):

Բարեբախտաբար մարդս, եթե ոչ գիտակցաբար, ապա բնազդաբար ու

ինքնաբերաբար, ապրում է հենց երաժշտական ժամանակով, գործում է դրանով, քանզի հավատում է իր անձի իրական գոյությանը և, փաստորեն, ոչ մի կասկած չունի դրա հանդեպ, նույնիսկ չի մտածում կամ չի ցանկանում մտածել ապագայում իր շփոթության մասին:

Բայց այս դեպքում ծագում է մեկ ուրիշ կարևոր հարց. արդյո՞ք երաժշտական ժամանակով ապրելով, դրան նախապատվություն տալով մարդս չի դատապարտվում հասարակությունից մեկուսացման ու ինքնապարփակման: Անշուշտ, երկու ժամանակների խստիվ հակադրման դեպքում կարող է ծագել նման վտանգ, բայց նախ՝ ինչպես ասվեց, նա չի կարող լիովին անտեսել ժամացուցային ժամանակը, հետևաբար դրանց հակադրությունը ոչ թե բացարձակ է, այլ հարաբերական: Ուստի ապրելով երաժշտական ժամանակով, մարդը հաղորդակցվում է նաև արտաքին, ժամացուցային կամ աշխարհի ժամանակին: Երկրորդ, հասարակական կամ ընկերային կյանքը նույնպես ունի իրեն ներհատուկ երաժշտական, այսինքն՝ հավաքական ժամանակ, որպես հավաքական ոգեկան լինելության ինքնաբերական պայման, որի անունն է Պատմություն: Հետևաբար, «ազգի մը պատմութիւնը,— գրում է Շ. Թ. Պերպերյանը,— ուրիշ բան չէ, բայց եթէ այդ ազգին արտաքինապէս անցնող ու ջնջող կեանքին ազատագրումը Արտաքին ժամանակին ջնջող վազքէն՝ հաւաքական ներքին թանձրական Տելոզութեան մը մէջ անոր հաստատումովը» (էջ 47):

Եթե այդպես է, ուրեմն կարող ենք ասել, որ ցանկացած ազգի կայացման պայմանն ու գոյության երաշխիքը ոչ թե ներկայում ու ներկայով ապրելն է, այլ ներկայի մեջ անցյալի առկայացումը, այսինքն՝ երբ ներկան դիտում է որպես դարերի կյանքով ներթափանցված լիություն ու լուսավոր ճաճանչում, նաև ապագային ուղղված իր ճիգերի ներշնչման աղբյուր: Միայն այդ դեպքում ու այդ պայմանով կարող է խոսք դնալ տվյալ ազգի հավաքական անձի համար կարևոր, դարերի տևողություն ունեցող ժամանակի կայացման մասին, հենց որն էլ նրա գոյության շարունակման ամենաթանկագին երաշխիքն է: Այստեղից հետևում է, որ կա պատմության երկու ըմբռնում՝ նայած թե որ ժամանակն ենք հիմք ընդունում, ըստ այդմ՝ կարող ենք պատմությունից կատարել հոռետեսական ու հուսահատական կամ, ընդհակառակը, լավատեսական ու ոգեշնչող եզրակացություն: Բնական է, արտաքին, ժամացուցային ժամանակով ղեկավարվելու դեպքում եզրակացությունը կարող է լինել միայն ու միայն հոռետեսական, իսկ մարդու գործելիքը՝ ժխտական-սպառողական: Մինչդեռ, եթե առաջնորդվենք երաժշտական ժամանակով և պատմությունը դիտենք ու զգանք «իրբև հաւաքական թանձրական կինելութեան մը ոգեկան իրականութիւնը մեզի տուող՝ այսինքն բուն Պատմութիւն, պիտի ունենանք զայն այս անգամ ընդհակառակը իրբև մեր ազգային կեանքը ներշնչող հերոսական ուժի մը մշտահոս աղբիւր» (էջ 48): Մասնավորելով իր խոսքը մեր ժողովրդի պատմության վրա, հայրենասեր մտածողը իրավամբ եզրակացնում է, որ հենց երաժշտական ժամանակով ու միայն նրանով ղեկավարվելու դեպքում կարող ենք մեր պատմությունը դիտել որպես «դարերու Տելոզութիւն մը գոյացնող հերոսական ու սրբազան ու անհուն՝ իբր Համանուագ մը զայն պիտի սիրենք... որ իրմէ անբաժան պիտի ունենայ իբր յաւերժութեան շունչի մը ներկայութիւնը. որուն հմայքին տակ ահա որ պիտի տարուինք մեր անձնական Տելոզութեան Մեղեդին ընդելուզելու այդ մեծ Համանուագին» (նույն տեղում):

Արդ՝ ավարտելով ասելիքս ժամանակի պերպերյանական ըմբռնման մասին՝ վերջում կցանկանայի սվելացնել միայն, որ թեև ընդհանուր առմամբ հայ իմաստասերը քայլում է իր ուսուցիչ Ա. Բերգսոնի հետքերով, բայց և

այնպես ֆրանսիացի մտածողի մարդասիրական, լավատեսական ուսմունքից կատարում է մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող գործնական կարևոր եզրակացություն՝ մարդ արարածի կյանքի իմաստն ու խորհուրդը, ոչ թե հուսալքվելու և անգործության մատնվելու, հետևաբար և կրավորական-սպառողական կեցվածք ընդունելու, այլ ապագային լավատեսորեն նայելու, կյանքի դժվարությունները հաղթահարելու, մաքառելու, արարելու մեջ է: Կարծում եմ՝ նույնիսկ ավելորդ է ասել, թե նման մտածողությունը որքան կարևոր էր մեր ժողովրդի մի ստվար հատվածի՝ սփյուռքահայ եղբայրների հոգիներում խորտակված հույսերի ու երազների, նրանց համակած հոռետեսության ու համընդհանուր հուսալքության պայմաններում ապրելու, մաքառելու, արարելու և հայ մնալու վե՛հ ձգտումներ արթնացնելու տեսակետից:

Ավելին, մեծ հայրենասերի լուսավոր գաղափարները այսօր ևս շեն կորցրել իրենց իմացական արժեքն ու կարևորությունը, այլ մնում են արդիական թե անցումային շրջանում գտնվող Մայր Հայրենիքի և թե ուժացման վտանգին մատնված սփյուռքի յուրաքանչյուր հայի համար, ում մտահոգում է Հայրենիքի և հայ մարդու բախտն ու ճակատագիրը:

Свщ. ЗАХАРИЯ САРИБЕКЯН—Практическое значение перперяновского понимания времени.— Подробно представляя перперяновское понимание времени, автор показывает, что армянский философ развивает учение своего учителя Анри Бергсона о времени, в сущности, локализует и национализирует его, делает такие практические выводы, которые и сегодня не утратили своей значимости как для находящейся в переходном периоде матери-родины, так и стоящего перед угрозой ассимиляции спюрка (армянской диаспоры).